ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИНСТИТУТ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ, Երևան, 0025, ԱլեքՄանուկյան 1 • РеспубликаАрмения, Ереван, 0025, АлекаМанукяна 1 • 1 AlexManoogian, 0025, Yerevan, RepublicofArmenia

(+374 10) 55-42-82, info@armin.am, www.armin.am, www.ysu.am

Արձանագրություն №1/2014
Երևանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրինության՝ 2014 թ. փետրվարի 18-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի

Նիստին ներկա էին տնօրինության 8 (ութ) անդամներից 8-ը (ութ):
Նիստը նախագահում էր ԵՊՀ ռեկտոր, ՀՀԻ տնօրեն Ա. Սիմոնյանը:
Ռեկտոր Ա. Սիմոնյանը, բացելով տնօրինության նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ՀՀԻ գործունեությունը 2013 թ. – փոխտնօրեն՝ Մ. Հովհաննիսյան
2. Վիրտուալ հայագիտ. և տեղեկ. բաժնի 2014 թ. գործունեության նախագիծ – փոխտնօրեն, բաժ. ղեկ.՝ Մ. Հովհաննիսյան
3. Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի 2014 թ. գործունեության նախագիծ – լաբ. ղեկ.՝ Վ. Մխիթարյան
4. Հայ-վրացական հարաբերությունների բաժնի 2014 թ. գործունեության նախագիծ – բաժ. ղեկ.՝ Հ. Բայրամյան
5. Հայ-քրդական առնչությունների բաժնի 2014 թ. գործունեության նախագիծ – բաժ. ղեկ.՝ Վ. Պետրոսյան
6. Հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի 2014 թ. գործունեության նախագիծ – լաբ. ղեկ. Հ. Ավետիսյան
7. Ցեղասպանագիտության բաժնի 2014 թ. գործունեության նախագիծ – բաժ. ղեկ.՝ Վ. Պողոսյան
8. «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն - պատասխանատու քարտուղար՝ Վ. Պողոսյան
9. Աղբյուրագիտության բաժնի 2014 թ. գործունեության նախագիծ – ԵՊՀ ռեկտոր, ՀՀԻ տնօրեն, բաժ. ղեկ.՝ Ա. Սիմոնյան
10. ՀՀԻ 2014 թ. գործունեության նախագծի շուրջ - ԵՊՀ ռեկտոր, ՀՀԻ տնօրեն՝ Ա. Սիմոնյան
11. Գիտխորհրդի կազմում փոփոխություն կատարելու վերաբերյալ - ՀՀԻ տնօրեն՝ Ա. Սիմոնյան
12. Ընթացիկ հարցեր:

Տնօրինության անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին՝ ԵՊՀ ՀՀԻ 2014 թ. տարեկան գործունեության ծրագրի նախագծում ներկայացված թեմաների, ՀՀԻ «Հայագիտության հարցեր» հանդեսի, ՀՀԻ գիտխորհրդի կազմում փոփոխություն կատարելու վերաբերյալ. փոխտնօրեն Մ. Հովհաննիսյանը ներկայացրեց ՀՀԻ գործունեությունը 2013 թ., ապա անդրադարձավ Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնի 2014 թ. գործունեությամբ նախատեսված 4 առաջարկվող թեմաները, Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի ղեկավար Վ. Մխիթարյանը՝ 3 առաջարկվող թեմաները, Հայ-վրացական հարաբերությունների բաժնի ղեկավար Հ. Բայրամյանը՝ 4 առաջարկվող թեմաները, Հայ-քրդական առնչությունների բաժնի ղեկավար Վ. Պետրոսյանը՝ 11 առաջարկվող թեմաները, Հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար Հ. Ավետիսյանը՝ 2 առաջարկվող թեմաները, Ցեղասպանագիտության բաժնի ղեկավար Վ. Պողոսյանը՝ 10 առաջարկվող թեմաները և «Հայագիտության հարցեր» հանդեսի հերթական 2 համարների հարցերը, Աղբյուրագիտության բաժնի ղեկավար Ա. Սիմոնյանը՝ 2 առաջարկվող թեմաները, ինչպես նաև ՀՀԻ գիտխորհրդի կազմում փոփոխություն կատարելու վերաբերյալ հարցը:

Որոշեցին՝

1. Տալ հավանություն ԵՊՀ ՀՀԻ 2014 թ. տարեկան գործունեության ծրագրի նախագծին:
2. Համաձայն ՀՀԻ գործող կանոնադրության 34-րդ կետի 8-րդ ենթակետի՝ տնօրենի հաստատմանը ներկայացնել ԵՊՀ ՀՀԻ 2014 թ. տարեկան գործունեության ծրագրի նախագիծը:
3. Ընդունել ՀՀԻ գիտխորհրդի կազմում փոփոխություն կատարելու վերաբերյալ ներկայացված առաջարկը:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀԻ տնօրեն՝ Ա. Հ. Սիմոնյան

ՀՀԻ փոխտնօրեն՝ Մ. Ս. Հովհաննիսյան

18.02.2014 թ.